# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 38

«16» 04 2018 թ. գ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի Ն 8 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը և ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ մասերով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 79-րդ հոդվածի 6-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի հետևյալ կազմը՝ 3 տարի ժամկետով՝

***Հանձնաժողովի նախագահ՝***

**Արմեն Հարությունյան**- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնաժողովի անդամներ՝***

**Արտակ Հարությունյան**- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչության պետ

**Գևորգ Բաղդասարյան** - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ

| | |
|---|---|
| **Արմեն Մարուխյան -** | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ |
| **Արսեն Սարդարյան -** | Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ |
| **Սերգեյ Առաքելյան -** | Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ) |
| **Սամվել Դիլբանդյան-** | ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ) |
| **Արա Գաբուզյան -** | ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ) |
| **Գնել Մուղնեցյան -** | ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ): |

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի քարտուղար նշանակել Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Սուրիկ Պարսամյանին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի փետրվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 8 հրամանը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**